

## ԱՄՍՈՒԱՅՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### \* ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԱԽՃԱՆԸ

Ամսիս 11-ին առաւօտ կարճատև հիւանդութիւնից յետոյ՝ է Տէր հանգեաւ Ամենայն Հայոց ծայրագոյն պատրիարք կաթողիկոս Տ. Տ. ՄԱՏԹԵՈՍ Բ-ը.

Այդ համազգային գոյժը անմիջապէս տարածուելով աշխարհիս ամեն կողմ ցրուած հայերի մէջ ամեն կողմից ցաւակցական արտայայտութիւններ եղան էջմիածնի Աթոռին վերահաս դըժբաղտութեան առթիւ:

Հետևեալ օրը հանդիսաւոր հոգեհանդիստ կատարուեց Վանքի եկեղեցում և ամեն հայաբնակ վայրերի եկեղեցիներում: Հոգեհանդստեան ներկայ էր Վանքում փոխարքայի ամուսին Կոմսուհին, գեներալներ, օտար ազգերի հոգեորականութեան գլուխներ և հայ գողովրդի ստուար բազմութիւն:

Էջմիածին գնացին պատղամաւորութիւններ տ. փոխարքայի կողմից՝ իւր օգնական Ն. Գ. Վատացին, գեն, Լազարեանը, և ամեն հաստատութիւնների բազմաթիւ ներկայացուցիչներ, բազմաթիւ արծաթէ և այլ պատկներով: Արծաթէ պատկ դրուեց և տ. փոխարքայի կողմից: Թիֆլիս քաղաքի կողմից գնացել էր նորընտիր քաղաքագլուխ պ. Ալ. Խափիսեանը, տանելով արծաթէ պատկ:

«Լումայի» խմբագրութիւնը, որ գեռ ևս Վեհի հիւանդ ժամանակ մի գրութեամբ խնդրել էր Ն. Ս. գաւազանակիր Տ. Մեսրովի Վ. Նշանեանին իւր ցաւը յայտնել Հայրապետին և մազթել առողջութիւն, այժմ Ն. Մըրութեան մահուան գոյժը լսելուն պէս:

իւր կողմից գրաւոր խնդրել էր բարձր. Հ. Տիրայր վարդապետին խմբագրութեանս խորին ցաւակցութիւնը յայտնելու Վեհ. Հայրապետի մահուան առիթով և լինել ներկայացուցիչ Նորին Օծութեան յուղարկաւորութեանը.

Կ. Պոլսի ազգային ժողովը իւր կողմից ներկայացուցիչ էր ընտրել Վեհի թաղմանը Քիշինևի առաջնորդ Տ. Ներսէս արք. Խռովավերդեանին, պ. Ժամբ. Առաքելեանին, և պ. Ա. Մելիք-Ազարեանցին.

Վեհի յուղարկաւորութիւնը կատարուեց էջմիածնում մեծ շըքով ու հանդիսով և խուռն բազմութեան ներկայութեամբ:

Սինօդը, Վեհի մահից յետ Հայրապետական Տեղապահ յայտարեց, ըստ պօլօժէնիսայի, Սինօդի աւագ անդամ Ամեն. Տ. Գէորք արք. Սուրենեանին, որպիսի պոշտօնը նա վարեց և երիմեան Հայրիկի մահից յետ:

❖ Թիֆլիզում սրտի պայթիւնից վախճանուեց Թեմիս բարձրացը Սրբազն առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանը 58 տարեկան հասակում և հանդիսապէս թաղուեց Վանքի եկեղեցու գաւթում:

Մոսկուայում վախճանուեց հարուստ միլիոնատէր Աթ: Ժամհարեանը, որ երկու հարիւր յիսուն հազար ռուբլի է կտակել Կովկասում մի բարձրագոյն հայկական դպրոց բանալու:

Թիֆլիզի քաղաքագլուխ ընտրուեց քաղաքային վարչութեան եռանդուն գործիչ պ. Ալէքսանդր Խատիսեանը:

Աքսորից ազատուեց քաղաքային յայտնի գործիչ պ. Արշակ Բաբեանը և վերսատանձնեց իւր նախկին պաշտօնները քաղաքային վարչութեան մէջ և տեխնիքական ուսումնարանում:

1911 թուի մայիսի 7-ին որոշուած է տօնել մեր նշանաւոր Վիպագրող Շիրվանզադէի 25 ամեայ յօբելեանը:

Մեր աշխատակից պ. Մ. Շովրեանը ներկայումս զբաղուած է հարիւրաւոր Հայոց արձանագրութիւնների հայերէն թարգմանութեամբ ըստ յանձնարարութեան կոմսուհի Ռւվարօվայի, որ

անցեալները թիֆլիսումն էր։ Արձանագրութիւնները ընդօրինակուած են յատկապէս Այրիվանք-Գեղարդում 1907 և 1908 թուականներին պ. Ծածուածութիւնն առ 1907 թիվ 1908 թիվ 1909 պահանջմանը ուսուցիչն է։

## Ա Զ Դ

Լոյս տեսաւ «Եղիշէի Վարդանանց պատմութեան» աշխարհաբար թարգմանութիւնը թերթիս խմբագրի աշխատութեամբ և ինչպէս ձրի յաւելուած ուղարկուեց 1910 թուի Լումայի այն բաժանորդներին,որոնք կանխօրէն վճարել էին իրանց բաժնէգները։

## «ԼՈՒՄԱՅ»-Ի ՀԵՌԱԳԻՐ

**Մեր Պարիզի թղթակիցը դեկտ. 30 12 ժ. 18 ր. հեռագրում  
է մեզ.**

Սպանդարեանցի դատը քննուեց. յաղթութիւնը կատարեալ է. անջնջելի փաստերը փշրուեցան։